

Հավելված
Լեռնապատ համայնքի զարգացման
<<Հնգամյա ծրագիրը>>
հաստատելու մասին ավագանու
23 դեկտեմբերի 2016թ.-ի N54-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՌԻ ՄԱՐԶ



ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմել է համայնքի ղեկավար՝

Ս. Աբազյանը

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 23 դեկտեմբերի 2016թ. N54-Ն որոշմամբ

2016թ.
գ. Լեռնապատ

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք _____3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն _____5_
 - 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն _____5_
 - 2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը _____6
 - 2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը _____8
 - 2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները _____12
 - 2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ _____13
 - 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն _____24
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում _____25
 - 3.1. Համայնքի զարգացման տեսլական _____26
 - 3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ _____28/հավելված 1/
4. ՀՀԶԾ ֆինանսավորում _____28/հավելված 2/
5. ՀՀԶԾ մոնիթորինգ _____28/հավելված 3/

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի Լեռնապատ համայնքի 2017-21թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (ՀՀԶԾ) մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀՀԶԾ ի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը: ՀՀԶԾ-ը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է: ՀՀԶԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- համայնքում առկա ենթակառուցվածքը և մատուցվող ծառայությունները.
- համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

Ելնելով այն իրողությունից, որ համայնքը փոքր է իր բնակչության թվաքանակով և ֆինանսական կարողություններով, համայնքի ՏԻՄ-երն ի վիճակի չեն իրականացնել օրենքով իրենց վերապահված լիազորություններն ամբողջ ծավալով և բոլոր ոլորտներում: Այդ պատճառով սույն ՀՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը), որոնց կառավարման համար նախատեսվել են որոշ գործողություններ ու միջոցառումներ:

Համայնքի 2017-21թթ. ՀՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ ունենալով հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով աստիճանաբար բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները: ՀՀԶԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարը և ավագանու անդամները ՀՀԶԾ-ի փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական

կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում: ՀՀԶԾ-ը համայնքի յուրաքանչյուր բնակչի փաստաթուղթն է : Համայնքի ամբողջ բնակչության օժանդակությունն ու ներդրումն ապահովելու համար ՀՀԶԾ կազման և իրականացման վերահսկողության աշխատանքները պետք է լինեն առավելագույն չափով մասնակցային: Դա կօգնի համայնքի ղեկավարին, որ ՀՀԶԾ-ը մշակի այնպես, որ արտահայտի ողջ բնակչության հավաքական կամքն ու ցանկությունը:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՆԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լեռնապատ համայնքը հնագույն բնակավայր է: Նրա տարածքում պահպանվել են բրոնզեդարյան բնակատեղիների հետքերը, բայց գրավոր հիշատակություններ չկան: Գյուղի Ուռուտ հանդամասում պահպանվել են 13-րդ դարի գերեզմանոցի հետքերը: Գյուղում կա 1862թ. կառուցված Բազիլիկ եկեղեցի, որը գտնվում է վթարային վիճակում: 17-րդ դարում գյուղը կոչվել է Հաջի-Ղարա: Բնակչության մեծ մասի նախնիները 18-րդ եվ 19-րդ դդ. այստեղ են տեղափոխվել Ղարաբաշից, Պարսկաստանի Սալմաստ գավառից եվ Արևմտյան Հայաստանից: 1918թ. գյուղը հերոսաբար մասնակցել է Ղարաքիլիսայի ճակատամարտին եւ ստացել Կարմիր Հաջի-Ղարա անունը: Հայրենական Մեծ պատերազմից հետո վերանվանվել է Մակարաշեն, իսկ 50-ական թվականների վերջին՝ Լեռնապատ: 1988թ-ին տեղի ունեցած երկրաշարժից գյուղը ավերվել է ամբողջովին: 1988թ երկրաշարժից հետո Լեռնապատ գյուղը տեղափոխվել է նոր վայր, հնից 2 կմ հեռավորության վրա և գյուղը բաժանվել է երկու մասի՝ նոր և հին գյուղերի:

Համայնքը գտնվում է Լոռու մարզում, Փամբակի լեռնաշխարհի լանջին, Երևան-Վանաձոր մայրուղուց 2 կմ արևմուտք: Համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում մարզկենտրոնին մոտ, հանրապետական նշանակության ավտոճանապարհին մոտ: Հեռավորությունը Վանաձոր քաղաքից ավտոճանապարհով 15 կմ է դեպի հյուսիս-արևմուտք: Համայնքի կենտրոնով հոսում է Լեռնաջուր գետը: Կլիման բարեխառն է՝ ամռանը մեղմ և զով, առավելագույն ջերմաստիճանը 30 աստիճան: Տարվա մեծ մասը տարածաշրջանը ենթարկվում է Միջերկրական, Սև ծովերի խոնավ օդային զանգվածների հոսքին, որոնք բերում են առատ տեղումներ: Տեղումների քանակը մեծ է հատկապես մայիս-հունիս ամիսներին: Ձմռանը նույնպես մեղմ է, բայց երկարատև: Առավելագույն աստիճանը դիտարկվել է մինչև -20 աստիճան: Ծովի մակարդակից միջին բարձրությունը 1520 մ է: Գյուղը սահմանակից է Արջուտ, Սարալ, Դարպաս, Հալավար գյուղերին: Համայնքի վարչական տարածքը կազմում է ընդհամենը՝ 5231,70 հա , որից բնակավայրերի կառուցապատված տարածքը կազմում է 178,37 հա: Համայնքի վարչական տարածքում գործում է երկու՝ բազալտե / բացահանք/ և սև հրաբխային տուֆի/ բացահանք/ հանքավայրեր:

Ժողովրդագրություն

Գյուղն ունի՝ 615 տնտեսություն և 2025 բնակիչ, որոնցից տղամարդիկ- 1004, կին- 1021:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է.

1. Երեխաներ/0-6 տ./- 166
2. Երեխաներ/7-17տ./- 269
3. 18-63 տարեկան- 1317
4. 63-ից բարձր տարեկան-273

5. Կենցաթոշակառուներ – 423
6. Հաշմանդամներ- 150
7. Միակողմանի ծնողազուրկ երեխաներ-12
8. Արցախյան պատերազմի մասնակիցներ-13
9. Ընտրողների թիվը-1527

2.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 58580,5 հազ ՀՀ դրամ, ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 18,5%:

Համայնքում հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, այգեգործությամբ, մեղվաբուծությամբ, հացահատիկի, կարտոֆիլի և բանջարեղենի արտադրությամբ: Արտադրվում է միս, կաթնամթերք, մեղր, բուրդ, հատապտուղներ, խոտ:

Համայնքի բնակիչները արտադրանքը սպառում են մոտակա քաղաքային շուկայում:

Համայնքը ունի գեղեցիկ խաղահրապարակ, որտեղ տեղադրված են նստարաններ: Նախատեսվում է կատարել ծառատունկ և ցանկապատում: Համայնքի վարչական տարածքում, գետի ափին մոտ՝ Ուռուտ, Ղարաչոբան կոչվող հանդամասերում, կան հանգստի գոտիներ: Ամռանը մեծ քանակությամբ զբոսաշրջիկներ, ինչպես նաև համայնքի բնակիչներ իրենց հանգստյան օրերը անց են կացնում այս չքնաղ, գեղատեսիլ վայրում: Կից գտնվում է մերձակա անտառային գոտին: Համայնքի վարչական տարածքը և բնությունը շատ նպաստավոր է տուրիզմի զարգացման համար:

Գյուղն ունի երկհարկանի մեկ միջնակարգ դպրոց, որի կառուցումն ավարտվել է 2007թ-ին: Դպրոցն ունի շուրջ 219 աշակերտ, 37 աշխատատեղ: Ապահովված է կենցաղի, խմելու ջրով, ունի լոկալ կոյուղի: Դպրոցն ունի իրեն անհատույց հատկացված 0,1936 հա հողատարածք: Վերջին տարիներին կրճատվել է սովորողների թիվը բնակչության արտագաղթի պատճառով: Դպրոցը համալրված է մասնագետ կադրերով:

Նախադպրոցական դաստիարակությունն իրականացվում է գործող մանկապարտեզի միջոցով, որը շահագործման հանձնվեց 2016թ.-ին, գեղեցիկ հարմարավետ քարե շինություն է, այն ապահովված է կենցաղային, խմելու ջրով, ունի լոկալ կոյուղի, բնական գազ, ջեռուցում, որտեղ հաճախում է 36 երեխա: Մանկապարտեզը կառուցված է մեկ խմբի համար, սակայն մանկապարտեզի տարիքի երեխաների քանակը շատ ավելին է և նախատեսվում է ավելացնել ևս մեկ խմբի համար սենյակ:

Մանկապարտեզին կից տարածքում տեղադրված է ժամանակակից և շատ գեղեցիկ համայնքային խաղահրապարակ:

Գյուղում գործում է 2015թ.-ին կառուցված նոր ամբուլատորիա, որը հագեցած է անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Այնտեղ աշխատում են վերապատրաստված 1 բժիշկ և 2 բուժքույր:

Համայնքի բուժամբուլատորիայի հին շենքը 2016թ.-ին վերանորոգվեց մարզադահլիճի՝ բոլոր հարմարություններով: Համայնքի բյուջեի և գործարար արտերկրում գտնվող բնակիչների միջոցներով, այն կահավորվեց՝ ըմբշամարտի դահլիճի: Այժմ այնտեղ մարզվում են շուրջ 70 երեխա՝ երկու խումբ-հերթափոխով: Մարզադահլիճում բացակայում է մարզիչների և մարզումների սենյակների կահավորումը/ տրինաժորներ և այլ մարզային գույք:

Ներհամայնքային փողոցները և ճանապարհները հիմնականում ծածկույթ չունեն, բոլորը հողից են: Համայնքից մինչև մոտակա մայրուղի ճանապարհի երկարությունը հին գյուղից 5 կմ, իսկ նոր գյուղից՝ 2 կմ : Համայնքից մինչև մոտակա շուկա 15 կմ է: Ներհամայնքային հասարակական տրանսպորտը անցնում է համայնքի տարածքով: Բնակչությունը օգտվում է ավտոբուսից, որի հաճախականությունը օրական 4 անգամ է, իսկ արժեքը՝ 200 ՀՀ դրամ:

Համայնքը չունի մշակույթի տուն, գրադարան, ակումբ: Ակումբը և գրադարանը այրվել են հիմնովին:

Համայնքային միջոցառումները իրականացվում է համայնքային կենտրոնի շենքի դահլիճում: Դահլիճը շատ հարմարավետ է, ունի ջեռուցում, այնտեղ կա 208 նստարան, բեմ, դաշնամուր, երաշտական կենտրոն, բարձրախոս:

Համայնքը բաժանված է հին ու նոր գյուղերի, երկուսում գործում է խմելու ջրի և ոռոգման ցանց: Նոր գյուղը չունի կոյուղի, որի պատճառով սանիտարահիգիենիկ պայմանները հաճախ չեն պահպանվում: Աղբահանությունը կատարվում է անհատական ձևով, մոտ 50% -ով: Խիստ կարիք կա ոռոգման ներքին ցանցի նորոգման, որը գտնվում է անմխիթար վիճակում: Կապված Նոր գյուղում բնակարանների կառուցման հետ, նոր գյուղի խմելու ջրի ներքին ցանցի ընդլայնման խիստ կարիք կա: Պրորբլեմային է նաև աղբահանության հարցը:

Համայնքում կա 615 տնտեսություն, որոնցից 208-ը ընդգրկված են ընտանեական նպաստների համակարգում: Համայնքում կա միակողմանի ծնողազուրկ 12 երեխա, ամուսնալուծված անձի 5 երեխա, չորս և ավելի երեխա ունեցող ընտանիքների թիվը՝ 6-ն է:, հաշմանդամ երեխա ունեցող տնտեսությունները՝ 6-ն է:

Բնակչության զբաղվածության հիմնական տեսակներն են՝

- գյուղատնտեսական ինքնազբաղվածություն՝ 1287 մարդ
- վարձու աշխատողներ ոչ գ/տ ոլորտում, մասնավոր՝ 21 մարդ
- վարձու աշխատողներ ոչ գ/տ ոլորտում, պետական՝ 67 մարդ
- ոչ գ/տ ինքնազբաղվածություն՝ 7 մարդ
- չունեն զբաղվածություն՝ 259 մարդ:

2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

Համայնքի վարչական տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների ընթացքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Լոռու մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, Վանաձորի զբաղվածության տարածքային կենտրոնի հետ : Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2017-2021թթ. նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատի, սերմացուի և գյուղտեխնիկայի ձեռքբերման,
- գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղա-տնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով,
- համայնքային մշակույթի կենտրոնի կառուցում, որը կներառի նաև շահագործման հանձնված մարզադպրոցը. հնարավորություն կստեղծի ունենալ գրադարան, ակումբ, արվեստների և արհեստների դպրոց. աշակերտների համար կազմակերպել արտադասարանական ծրագրեր ու ամառային դպրոցներ, որոնց շնորհիվ երեխաները կզարգացնեն ստեղծագործելու հմուտությունները,
- մարզադահլիճի և մարզիչների սենյակի կահավորում. կմարզվեն համայնքի բնակիչների տարբեր տարիքային խմբերը. առողջ ապրելակերպ
- համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը,
- միջհամայնքային ճանապարհի կապիտալ նորոգում, բարեկարգում և ասֆալտապատում՝ նպաստելով համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքները մինչև շուկա հասցնելուն և իրացնելուն, մշտական հասարակական տրանսպորտային հաղորդակցության կազմակերպում և ապահովում,
- առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցման մակարդակի բարելավում՝ պետական

պատվերի շրջանակներում,

---բուժաշխատողների մասնագիտական կարողությունների զարգացման միջոցով առաջնային առողջապահական ծառայությունների որակի բարելավում,

---խնդիրների վաղ հայտնաբերման ու կանխարգելման նպատակով կազմակերպել բժշտական զանգվածային հետազոտություններ

-բուժամբուլատորիայի արդիականացում՝ նորագույն բժշկական սարքավորումներով վերազինման և կահավորման միջոցով:

· աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

- գործող մանկապարտեզին կից կառուցել ևս մեկ խմբի համար սենյակներ. քանի-որ այն նախատեսված է մեկ խմբի համար: Մանկապարտեզից կօգտվեն նախադպրոցական տարիքի բոլոր երեխաները: Նախատեսվում է ներդրում համայնքի վարչական տարածքում գտնվող Քարաբերդ ՍՊԸ-ի կողմից:

-նորակառույց մանկապարտեզը կահավորել անհրաժեշտ գույքով. Ապահովել երեխաների քունը և հանգիստը. համագործակցել դրնոր կազմակերպությունների և բարերարների հետ

-հին տնակային մանկապարտեզի շինությունը վերանորոգել հանդիսությունների սրահի. որի շնորհիվ համայնքի բնակիչները կխնայեն գումար և ժամակակ ընտանեական միջոցառումները իրականացնելիս , տեղացի և արտերկրի բարերարների կողմից իրականացվող ծրագրով՝ սրահի սպասքի ձեռքբերում

-գիշերային լուսավորվածության համակարգի անցկացում, բոլոր փողոցներով /շարունակական/.

- երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրը լուծելու. Կվերանան տնակային տնտեսությունները,

-համյանքում իրականացնել աղբահանությունը. համայնքը դարձնել բարեկեցիկ և մաքուր. բացառել վարակիչ հիվանդությունների տարածումը. ապահովել սանիտարահիգիենիկ պայմանները

-խմելու և ոռոգման ցանցի ընդլայնում նոր գյուղի տարածքում և Քոսալար թաղամասում

-նոր գյուղում կոյուղու կառուցում

-սելավատարների կառուցում

-Համայնքային խաղահրապարակի ցանկապատում. Ծառատնկում

-դպրոցին կից ֆուտբոլի դաշտի ցանկապատում, վոլեյբոլի և բասկետբոլի դաշտերի կառուցում, նստարանների տեղադրում. միջհամայնքային մրցաշարերի և բացօթյա միջոցառումների անցկացում

- համագործակցել տարբեր կազմակերպությունների հետ և իրականացնել տուրիզմի զարգացման ծրագրեր

-Իրականացնել անտառտնկման աշխատանքներ , շրջակա միջավայրի պաշտպանության և մաքրման աշխատանքներ

- համայնքի ներքին ցանցի գազատարի ավելացում՝ 2 կմ երկարությամբ գազատարի ներքին ցանց Հին գյուղում և մոտ 2,5 կմ ներքին ցանց Նոր գյուղում:

Այս բոլոր ծրագրերը պետք է իրականացվի համագործակցելով միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների , տեղացի և արտասահմանյան բարերարների , ինչպես նաև համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների հետ, նրանց կողմից նախատեսվել ծրագրերով, միջոցառումներով և ներդրումներով:

Համայնքը համագործակցել է հասարակական կազմակերպությունների, արտասահմանյան երկրների հետ և իրականացրել ուսուցողական տարբեր ծրագրեր, որոնք շարունակական են.

1. Հայաստանի ՓՄՁ ԶԱՀ հիմնադրամը և ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունը /UNIDO/ <<Արդյունաբերական աշխատանք Հայաստանում երիտասարդների համար, երիտասարդ ձեռներեցներն աջակցություն>> ծրագիր, որի իրականացմամբ համայնքի երիտասարդները ձեռք բերեցին բիզնես մարկետինգ, մենեջմենտ, արտադրական և ֆինանսական պլանավորման հիմունքների մասով գիտելիքներ, ինչպես բիզնեսը սկսել և այն հետագայում հստակ առաջ տանել:

2. Հատուկ կարիքավոր մարդկանց աջակցության <<ՈՒՆԻՍՈՆ>> հասարակական կազմակերպության իրականացրած <<Մասնակցային որոշումների կայացում ներառման միջոցով>>ծրագիր, իրականացվեց Ֆոկուս ծրագիրը: Ծրագրի իրականացմամբ վեր հանվեց հաշմանդամների խնդիրները, բարձրացվեց իրազեկվածությունը իրենց իրավունքների վերաբերյալ և որոշումների կայացման գործընթացում մասնակցության խթանում: Համայնքը նախատեսել է համայնքային կենտրոնի շենքում կառուցել թեքահարթակ, ապահովելու հաշմանդամների մուտքի մատչելիությունը :

3. Ժողովուրդների Զարգացման Միջազգային Կոմիտեի /ԺԶՄԿ/, որը հանդիսանում է <<Միգրացիայի սոցիալ-տնտեսական դրական ազդեցության ուժեղացումը Հայաստանում ավելի լավ ապագայի համար>> ԵՄ ֆինանսավորմամբ ծրագիր /CISP/, համայնքում իրականացվել է /շարունակական/ կաթնամթերքի, պանրի, չրի արտադրության վերաբերյալ վերապատրաստում , որին մասնակցել են համայնքի ԱԶ-երը և 36 բնակիչներ :Նրանք ստացան անհրաժեշտ գիտելիքներ և օգտագործվող սարքավորումներ /ջերմաչափ, կաթի քամիչ՝լավսան, պանրի կաղապար, ծառերի էտման գործիքներ և մեթոդական ուղեցույցներ/: Բարձրացվեց համայնքի բնակիչների իրազեկվածությունը արտադրանքի ճիշտ տեխնոլոգիայի պահպանման և արտադրման վերաբերյալ: Իրականացվել է << Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում>> ծրագիրը /շարունակական/, որը նպաստեց համայնքի կանանց սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը՝ կանանց ձեռնարկատիրական հմտությունների և գիտելիքների զարգացման միջոցով:

4. Համայնքը մասնակցել է Հայաստանի մանուկների հիմնադրի /COAF/ կողմից իրականացվելիք ծրագրում ընդգրկվելու համար անցկացվող մրցույթին և նախատեսում է հետագա իրականացվող ծրագրերում նույնպես մասնակցի, որպեսզի հիմնադրամի միջոցով իրականացնի կրթական, առողջապահական, սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր:

5. Բնակչության տեղեկատվության հասանելիության բարձրացման նպատակով համայնքում իրականացվում է CAST ծրագիրը, որը ղեկավարում է Միացյալ Թագավորության Մեդիայի Նորարարության Ստուդիայի կողմից: Այն տեղական WiFi ցանց է: Ցանցի մուտքը էլեկտրոնային անլար սարքերի միջոցով է տեղի ունենում ,որոնք տեղադրված են համայնքի տարբեր թաղամասերում, դպրոցում համայնքային կենտրոնի շենքում, կանգառներում և այն վայրերում , որտեղ բնակիչների հավաքատեղեր է: Այս սարքերը առանց համացանցի առկայության թույլ են տալիս տարածել տեղեկատվություն և լուրեր, որոնք շատ կարևոր են բնակչության համար: Նախատեսվում է շարունակել համագործակցություն և ամբողջ համայնքում ապահովել ծածկույթը: Ծառայության շնորհիվ համայնքի բնակիչները կարող են շփվել միմյանց հետ և մշտապես լինել տեղեկացված, իսկ շահագրգիռ կողմերը կմնան օնլայն ռեժիմում՝ առանց Ֆեյսբուք կամ Գուգլ մուտքի անհրաժեշտության:

6. Համայնքը համագործակցում է Վիքիպեդիա ՀԿ-ի հետ, համայնքում կա Վիքիպեդիայի ակումբ, այն գտնվում է համայնքային կենտրոնի շենքում, հազեցած է համակարգիչներով, այնտեղ հաճախում են դպրոցի երեխաները, ամրապնդում իրենց գիտելիքները և համալրում նոր բառերով վիքիբառարանը: Ծրագիրը շարունակական է, արդյունքը՝ Երեխաները կտրվում են փողոցից, ամրապնդում են իրենց գիտելիքները, լրացվում է Վիքիբառարանը:

2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Աղյուսակ . Համայնքի 2015-2016թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

h/h	Եկամտի տեսակը	2015.թ. փաստացի	2016.թ. փաստացի	2017թ. փաստացի	2018թ. կանխիկ	2019թ. կանխիկ	2020 թ. կանխիկ	2021 թ. կանխիկ
	Եկամուտներ ընդհ.	61545,5	58698,1	59853,5	60800,0	61000,0	61500,0	62000,0
1	Հարկային եկամուտներ	6260,5	6996,4	6420,4	6266,0	6350,0	6400,0	6450,0
1/1	Հողի հարկ	4402,0	4000,0	3878,6	3700,0	3700,0	3700,0	3700,0
1/2	Գույքահարկ	1952,1	2629,9	2175,8	2200,0	2250,0	2300,0	2350,0
2	Տուրքեր	306,0	366,5	366,0	366,0	400,0	400,0	400,0
3	Ընդ. ոչ հարկային եկամուտներ	2479,8	2223,9	2180,0	2280,0	2400,0	2500,0	2600,0
3/1	Պահուստային հողերի վարձավճար	2299,8	2000,0	200,0	2100,0	2200,0	2300,0	2400,0
3/2	Այլ տեղ. Տուրքի գանձ. Վճարներ	180,0	223,9	180,0	180,0	200,0	200,0	200,0
4	Պաշտոնական տրանսֆերտ	41400,3	40051,7	41252,1	42000,0	43000,0	44000,0	45000,0
4/1	Դոտացիա պետ. Բյուջե	41400,3	40051,7	41252,1	42000,0	43000,0	44000,0	45000,0
5	Տարեսկզբի ազատ մնացորդ	11404,9	9426,1	10001,0	10254,0	9250,0	8600,0	7950,0

2.5 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ

Լեռնապատ համայնքում գտնվում է «Կաթի» արտադրամաս, որը նախատեսված է կաթի մթերման, պանրի արտադրման և «Հաջիդարա» թանի արտադրման համար: Արտադրության հզորությունը՝ 1 օրում 2000լ կաթ, նախատեսված է 8 աշխատատեղ: Ներկա պահին արտադրամասը չի գործում, ունի արտադրանքի սպառման խնդիր:

Համայնքի վարչական տարածքում կա բազալտե հանք. որը ապահովում է 10 աշխատատեղ:

Համայնքում անհատ մարդկանց միջոցով կատարվում է կաթի հավաքում տարաներով և այն հանձնվում է Վանաձորի կաթի գործարան:

Համայնքում գործում է առևտրի 7 մանր կետեր: ՏԻՄ –երը մշտապես պաշտպանում են լավ ու բարյացակամ հարաբերություններ: Սակայն դրանով հանդերձ, միևնույն է համայնքում բիզնեսի զարգացման վիճակն առանձնապես բարվոք համարել չի կարելի:

Չնայած ՀՀ օրենսդրությամբ ՏԻՄ-երն այս ոլորտում պարտադիր լիազորություններ

համարյա թե չունեն, այնուամենայնիվ, համայնքի ՏԻՄ-երը շահագրգռված են համայնքում գործարար միջավայրի բարելավմամբ և պատրաստակամ են ըստ ամենայնի օժանդակել այս ոլորտում ցանկացած նոր նախաձեռնության, քանի որ այն մեծապես կնպաստի համայնքում նոր աշխատատեղերի ստեղծմանը, բնակչության եկամուտների ավելացմանը և վճարունակության բարձրացմանը, համայնքի բյուջետային սեփական միջոցների հավաքագրման մակարդակի բարձրացմանը և ծավալի մեծացմանը, և, այս ամենի արդյունքում՝ համայնքի ընդհանուր զարգացմանը:

Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ 2017-21թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

-* ըստ ամենայնի աջակցել համայնքում գործող արտադրական ձեռնարկություններին՝ աստիճանաբար ընդլայնելու բազալտի վերամշակման ծավալները և ավելացնելու աշխատատեղերի քանակը,

*- համայնքում խթանել անասնապահական, թռչնապահական և մեղվապահական

- մթերքների (մասնավորապես՝ կաթի, մսի, ձվի, մեղրի) արտադրության, հանձնման և վերամշակման արտադրամասերի ստեղծումը, գործարկումը և զարգացումը,
- - համայնքում կազմակերպել և աստիճանական զարգացնել տնային պայմաններում բնական հյութերի արտադրությունը և իրացումը,
 - - համայնքում խթանել առևտրի և ծառայությունների փոքր ու միջին նոր կետերի բացումը, բնակչությանը և հյուրերին պատշաճ մակարդակով սպասարկում՝ պաշտպանելով դրանց սեփականատերերի իրավունքները և շահերը,
 - - համայնքում դնել էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծման հիմքերը՝ ապահովելու զբոսաշրջիկների գիշերակացը տնային պայմաններում, հասարակական սնունդը, սպասարկումը, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցումը,
 - - աստիճանաբար բարեկարգել և ասֆալտապատել ներհամայնքային ճանապարհները և փողոցները, անցկացնել գիշերային լուսավորության համակարգեր, տեղադրել ճանապարհային նշաններ՝ նպաստելու համայնքում գործարար միջավայրի բարելավմանը և բիզնեսի զարգացմանը,

Համայնքի գույքի կառավարումը

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997 թ. Թիվ 51 որոշմամբ՝ հետևյալ կազմով.

Մանկապարտեզի փայտե մասնաշենք 1 միավոր

Վազոն տնակ 1 միավոր

Մանկապարտեզի կաթսայատուն 1 միավոր

Քարե շինություն 1 միավոր

Մանկապարտեզի փայտե մասնաշենք - կառուցված է երկրաշարժյան տարիներին:

Ոչ մի անգամ չի ենթարկվել վերանորոգման, չունի որևէ հարմարություն, չունի կոյուղի, սանհանգույց: Նոր մանկապարտեզի շահագործումից հետո, այն վերանորոգվում է և վերափոխում է հանդիսությունների սրահի, կազմված է նախագիծը և նախահաշիվը, կատարվում են աշխատանքները, 2017թ.-ին այն շահագործման կհանձնվի:

Վազոն տնակ- այն բարոյապես և ֆիզիկապես մաշված էր ու չէր

համապատասխանում պահանջվող չափանիշներին, վերանորոգել և տեղադրվել է

հին գյուղի գյուղամիջում և դարձել հանգստի սենյակ, մեծահասակների համար խաղասենյակ:

Մանկապարտեզի կաթսայատունը- հիմնովին ավերված վիճակում է:

Քարե շինություն- պահպանված է միայն պատերը, հետագա շահագործման համար ոչ պիտանի է:

Նախադպրոցական կրթություն. ակտիվ մշակույթային և մարզական կյանքի կազմակերպում. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում

Նախադպրոցական դաստիարակությունն իրականացվում է գործող մանկապարտեզի միջոցով, որը նախատեսված է մեկ խմբի համար, սակայն մանկապարտեզի տարիքի երեխաների քանակը շատ ավելին է և նախատեսված է ավելացնել ևս մեկ խմբասենյակ:

Հին տնակային մանկապարտեզի շենքը վերակառուցվել է մարզադահլիճի. որի մի մասը կահավորվել է, որպես ըմբշամարտի դահլիճ. իսկ մարզիչների և մարզումների սենյակները կահավորված չեն/ տրինաժորներ և այլ մարզային գույք: Դռնոր կազմակերպությունների և բարերարների միջոցով կահավորել մարզադահլիճի և մարզիչների սենյակները, կմարզվեն համայնքի բնակիչների տարբեր տարիքային խմբեր՝ առողջ ապրելակերպ, ակտիվ մարզական կյանքի կազմակերպում՝ երիտասարդների ներգրավում:

Համայնքային մշակույթի կենտրոնի կառուցում, որը կներառի նաև շահագործման հանձնված մարզադպրոցը. հնարավորություն կստեղծի ունենալ գրադարան, ակումբ, արվեստների և արհեստների դպրոց. աշակերտների համար կազմակերպել արտադասարանական ծրագրեր ու ամառային դպրոցներ, որոնց շնորհիվ երեխաները կզարգացնեն ստեղծագործելու հմուտությունները,

Բնակարանային շինարարության խթանումը

1988թ երկրաշարժի հետևանքով գյուղն ամբողջովին զրկվել է բնարանային ֆոնդից: Կատարվել է գյուղի տարհանում՝ տեղափոխվելով 2կմ հեռավորության վրա գտնվող տարածք: Կազմվել է գլխավոր հատակագիծ, որի համաձայն կառուցվել է 124 բնակարան: Անհրաժեշտ է կառուցել ևս 140 բնակարան՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրը լուծելու համար: Բացի այդ կան նաև բնակարան չկորցրած, սակայն այժմ բնակարանի կարիք ունեցող այլ նորաստեղծ ընտանիքներ, որոնց խնդիրը ևս ապագայում պետք է լինի պետության

ուշադրության առարկան: Նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1.Բարելավել երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային կարիքները:

2.Լուծել համայնքի բնակարանային հիմնախնդիրը:

3.Հնարավորության դեպքում նորաստեղծ ընտանիքներին հատկացնել տնամերձ հողամաս բնակարան կառուցելու նպատակով:

Ծրագիրն իրականացվում է ՀՀ նախագահի անմիջական վերահսկողությամբ և քաղաքաշինության նախարարության ծրագրով: Դիմել կառավարության աջակցությանը:

h/h	անվանումը	ընդհանուր մակերես քմ քանակը հատ	հայայնքային սեփական. քմ	Ֆիզիկակ և իրավաբ. անձ.սեփ. քմ	պետ. սեփ. քմ
1	բնակելի տներ	166			
2	վթարային տներ	222			
3	կիսակառույց տներ	78			
4	բնակ.ֆոնդ	2435600	630600	1793300	11700
5	ոչ բնակ. տարած	49881400	23037200	5072700	21771500

Շրջակա միջավայրի պաշտպանություն

Համայնքը բաժանված է հին ու նոր գյուղերի, երկուսում գործում է խմելու ջրի և ոռոգման ցանց: Չունի կոյուղի, որի պատճառով սանիտարահիգիենիկ պայմանները հաճախ չեն պահպանվում: Աղբահանությունը կատարվում է անհատական ձևով, մոտ 50% -ով: Խիստ կարիք կա ոռոգման ներքին ցանցի նորոգման, որը գտնվում է անմխիթար վիճակում: Կապված Նոր գյուղում բնակարանների կառուցման հետ, նոր գյուղի խմելու ջրի ներքին ցանցի ընդլայնման խիստ կարիք կա: Պորբլեմային է նաև աղբահանության հարցը:

2017-2021թթ ընթացքում համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում նախատեսվում է կազմակերպել և իրականացնել հետևյալ միջոցառումները

-համագործակցել Վանաձորի անտառտնտեսության հետ՝ համայնքի անտառային ֆոնդի պահպանությունը. մասնավորապես՝ անտառում ձմեռամուտի սանիտարական հատումները, սահմանված նորմերին համապատասխան պատշաճ մակարդակով իրականացնելու համար

-լայն բացատրական աշխատանքներ կատարել բնակչության հետ՝ կենցաղային աղբը չթափելու դրա հանար չնախատեսված վայրերում, զերծ մնալու բնության և շրջակա միջավայրի աղտոտումից ու վնասումից

-Յուրաքանչյուր տարի գարնանը համայնքում կամակերպել 2-3 շաբաթօրյակներ՝ իրականացնելու բնության և շրջակա միջավայրի մաքրության ծառատնկման, ծաղկատնկման աշխատանքներ, ներգրավելով նաև երիտասարդներին և դպրոցականներին:

Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն

Ներհամայնքային փողոցները և ճանապարհները հիմնականում ծածկույթ չունեն, բոլորը հողից են: Համայնքից մինչև մոտակա մայրուղի ճանապարհի երկարությունը հին գյուղից 5 կմ, իսկ նոր գյուղից՝ 2կմ : Ճանապարհի մի մասը ասֆալտապատ է , մի մասը ծածկույթ չունի: Համայնքում ՀՀ պետական և համայնքային բյուջեներով, համայնքի տարածքում գտնվող <<Քարաբերդ>> ՍՊԸ-ի աջակցությամբ, ամեն տարի այն վերանորոգվում է՝ խճով և ավազով, տեղ-տեղ ասֆալտապատվում է, իսկ հորդառատ անձրևները անընդհատ քանդում են այն: Ակնկալում ենք պետության աջակցությունը ճանապարհները ասֆալտապատելու համար: Կապահովվի տրանսպորտային բոլոր միջոցների անխափան երթևեկություն տարվա բոլոր եղանակներին, կվերացվի փողոցների ջրափոսերը և ճանապարհներին վտանգ սպառնող հատվածները:

Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն

- Բնակչության զբաղվածության հիմնական տեսակներն են՝
- գյուղատնտեսական ինքնազբաղվածություն՝ 1287 մարդ
 - վարձու աշխատողներ ոչ գ/տ ոլորտում, մասնավոր՝ 21 մարդ
 - վարձու աշխատողներ ոչ գ/տ ոլորտում,պետական՝ 67 մարդ
 - ոչ գ/տ ինքնազբաղվածություն՝ 7 մարդ
 - Աշխատունակներ-1400

- չունեն գրադվածություն՝ 259 մարդ:

միայն 21-ն են գրանցված Վանաձորի տարածաշրջանային գրադվածության կենտրոնում, որպես գործազուրկներ:

Համայնքի մոտ 615 ընտանիքներից 208-ը հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում, որոնցից սոցիալապես անապահովության

նպաստառուներ են գնահատվել 208 ընտանիքները (ընդհանուրի մոտ 30 %-ը):

Համայնքում բնակվում են նաև մոտ 150 հաշմանդամ և միակողմանի ծնողազուրկ 12 երեխա: Համայնքի ընտանիքների մեծ մասը սոցիալապես խոցելի են՝ բազմաբնույթ

սոցիալ-առողջապահական խնդիրներով: Համայնքի բնակիչներին շոշափելի

սոցիալական ծառայություններ մատուցվում են հիմնականում Վանաձորի

տարածաշրջանային ՍԾՏԳ-ի (պետական պատվերի շրջանակներում) և

համայնքապետարանի կողմից:

Գլխավոր հատակագիծ և քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ

Համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային

փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ,

քանի որ համայնքը չունի իր տարածական զարգացումը սահմանող՝

քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր (գլխավոր հատակագիծ,

գոտիավորման նախագիծ, ընթացիկ քաղաքաշինական քարտեզ, քաղաքաշինական

կադաստր, քաղաքաշինական կանոնադրություն և այլն, ընդհամենը 7 մլն

արժողությամբ), իսկ այդ փաստաթղթերի նախագծման (մշակման) պատվիրատուն,

համաձայն <Քաղաքաշինության մասին> ՀՀ օրենքի, ըստ որի սահմանվել է

փաստաթղթերի կազմման նոր ժամկետ՝ մինչև 2021թ.-ի հունվարի 1-ը, համայնքն է,

որը հնգամյա ժամանակահատվածում նախատեսվում է համագործակցություն

ծավալել Հայաստանում գործող նախագծային ինստիտուտների հետ՝ կազմելու

համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի մշակման աշխատանքների

նախահաշիվը: Համայնքի գլխավոր հատակագծի մշակման նախահաշիվային

արժեքը հաշվարկելուց հետո միջոցներ կձեռնարկվեն՝ հայթայթելու պահանջվող

գումարը ֆինանսավորման արտաքին աղբյուրներից (պետություն, միջազգային և

տեղական դոնոր կազմակերպություններ):

Վերջին հինգ տարիների ընթացքում կառուցապատողներին տրվել է թվով ութ

ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն):

Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանվածության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ

Այս ուղղությամբ 2017-21թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ 1.կանխարգելիչ միջոցառումները՝

- Ուսումնասիրել սելավատարները և վտանգավոր տեղամասերը
- Նախապատրաստել անհրաժեշտ տեխնիկա հետագա աշխատանքների համար
- Կատարել ջրերի հունների, սելավատարների մաքրում, կատարել ամրացման աշխատանքներ
- Պատրաստ վիճակի բերել համայնքի ՔՊ խմբերը և տեխնիկան
- Իրազեկել բնակչությանը սպասվող վտանգների և հնարավոր վարվելակերպի կանոնների մասին
- Նախապատրաստել տեխնիկան և կուտակել անհրաժեշտ քանակի վառելիք
- վտանգի պահին կազմակերպել բնակչության, նյութական արժեքների և անասունների տեղափոխումը
- Ճշտել գործողության պլանները

2. Հիմնական միջոցառումները

-Իրազեկել բնակչությանը սպառնացող վտանգների և նման պահերին իրենց գործողությունների մասին

-Տուժած շրջաններում հնարավորության սահմաններում կազմակերպել վերականգնողական և մաքրման աշխատանքներ

Հոդօգտագործում

Աղուայակ- տվյալներ 01.07.2016թ.-ին հաստատված համայնքի հողային հաշվեկշռի

1. Գյուղատնտեսական	Ընդ. 4399.40/հա/
2. Բնակավայրերի ընդ. տարածք	243.56
3. Արդյունաբերական ընդ.	57.91
4. Էներգետիկային,տրանսպ. և կապի	6.05

5. հատուկ պահպանման տարածք.	3.91
6. հատուկ նշան.	---
7. անտառային	476.86
8. Ջրային ընդ. տարածք	16.77
Ըդամենը վարչական տարածք	5231.70

1991թ. հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհմանը մասնակցել են համայնքի տնային տնտեսությունների 564 ընտանիքները: Համայնքի սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը կազմել է 0,80հա, մեկ տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական հողերի մեկ հողաբաժնի չափը կազմել է 0,70 հա:

Գյուղատնտեսություն

Համայնքում չկա գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգ, այդ պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չի կարողանում ստանալ: Համայնքում ավելի զարգացած է անասնապահության ճյուղը: Սակայն, դրա հետագա զարգացման համար համայնքում խոտհարքների տարածքները չեն բավականացնում, այդ պատճառով համայնքի վարելահողերն աստիճանաբար վերածվում են խոտհարքների կամ բնակչությունն անասնակերի մի մասը ստիպված է լինում գնել հարևան համայնքներից: Բնակչության սեփական խոտհարքները գտնվում են համայնքից 20 կմ հեռավորության վրա, որոնք դարձել են անօգտագործելի:

2016թ. հունվարի 1-ի դրությամբ, համայնքի խոշոր եղջերավոր անասունների քանակը

		Ընդամենը
1.	Խոշոր եղջերավոր անասուններ	945
2.	կովեր	545
3.	Խոզեր	269
4.	Ոչխարներ և այծեր	246
5.	Ավանակներ և ջորիներ	-
6.	Ձիեր	14
7.	Հավեր և/կամ այլ թռչուններ	1928

8.	Նապաստակներ և ճագարներ	-
9.	Մեղվաընտանիք /փեթակներով/	680

Համայնքի գրեթե յուրաքանչյուր տնային տնտեսություն պահում է նաև որոշ քանակության թռչուններ, առավելապես՝ հավեր՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար: Համայնքի մի քանի տնային տնտեսություններ հաջողությամբ զբաղվում են նաև մեղվապահությամբ: Համայնքում անասնապահությամբ, թռչնապահությամբ և մեղվապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, ձու, մեղր: Համայնքի բնակիչներն իրենց տնամերձերում աճեցնում են կարտոֆիլ և բանջարաբոստանային կուլտուրաներ՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար: Համայնքի բնակիչներն ունեն խնդիրներ ու դժվարություններ արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում:

Մշակվող սեփականաշնորհված գ/տ հողերի բաշխվածությունն ըստ գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների 2016թ. տվյալներով.

		Տարածքը	Մեկ հեկտարից ստացվող միջին բերքը (բերքատվությունը)
		հա	տոննա
1.	Ընդամենը հացահատիկային մշակաբույսեր	21,0	3,27
<i>այդ թվում՝</i>			
1.1.	ցորեն	10,5	3,5
1.2.	գարի	8,0	3,5
1.3.	հաճար	-	-
1.4.	այլ հացահատիկայիններ	-	-
2.	Ընդամենը հատիկաընդեղենային մշակաբույսեր	2,5	2,8
<i>այդ թվում՝</i>			
2.1.	լոբի	2,5	2,8
2.2.	սիսեռ	-	-
2.3.	այլ հատիկաընդեղենային	-	-
3.	Կարտոֆիլ	26,0	2,4

4.	Բանջարանոցային մշակաբույսեր	6,5	2,5
5.	Բոստանային մշակաբույսեր	-	-
6.	Խաղող	-	-
7.	Պտղի և հատապտղի տնկարկներ	-	-
8.	Կերային մշակաբույսեր	1,0	3,0
9.	Ծխախոտ	-	-
10.	Այլ	-	-

Հանգստի գոտիներ, զբոսայգիներ, խաղահրապարակներ

Համայնքը մանկապարտեզին կից տարածքում ունի գեղեցիկ խաղահրապարակ, որտեղ տեղադրված են կարուսելներ, ճոճանակներ, սղարաններ, տնակներ և այլ խաղամիջոցներ: Նախատեսվում է կատարել ծառատունկ և ցանկապատում: Քանի որ գյուղը բաժանված է 2 մասի, նախատեսվում է կառուցել ևս մեկ խաղահրապարակ նոր գյուղում՝ համայնքային կենտրոնին կից տարածքում: Համայնքի վարչական տարածքում, գետի ափին մոտ՝ Ուռուտ, Ղարաչոբան կոչվող հանդամասերում, կան հանգստի գոտիներ: Ամռանը մեծ քանակությամբ զբոսաշրջիկներ, ինչպես նաև համայնքի բնակիչներ իրենց հանգստյան օրերը անց են կացնում այս չքնաղ, գեղատեսիլ վայրում: Կից գտնվում է մերձակա անտառային գոտին: Համայնքի վարչական տարածքը և բնությունը շատ նպաստավոր է տուրիզմի զարգացման համար: Այս ուղղությամբ անելիքներ շատ կան՝ համագործակցել տարբեր կազմակերպությունների հետ և իրականացնել տուրիզմի զարգացման ծրագրեր:

Համայնքի դպրոցին կից տարածքում կա համայնքային ֆուտբոլի խաղադաշտ. Այն չունի ցանկապատում, նախատեսվում է կից կառուցել նաև վոլեյբոլի և բասկետբոլի դաշտեր, տեղադրել նստարաններ և ցանկապատել: Այն կօգտագործվի ինչպես դպրոցի այնպես էլ համայնքի բնակիչների կողմից: Կանցկացվեն միջհամայնքային մրցաշարեր և բացօթյա մեծ միջոցառումներ:

Առողջության պահպանման և բարելավման ծրագրեր

Գյուղում գործում է 2015թ.-ին կառուցված նոր ամբուլատորիա, որը հագեցած է անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Այնտեղ աշխատում են վերապատրաստված 1 բժիշկ և 2 բուժքույր: Ամբուլատորիային համայնքի բյուջեից տրամադրվում է գումար դեղորայքի համար՝ սոցիալապես անապահով խավին դեղորայքով ապահովելու համար: Գյուղի առողջապահական վիճակը բարվոք է:

Բարվոք է նաև գյուղի սանհիտարահիգիենիկ վիճակը, սակայն այստեղ դեռ անելիքներ կան: Պետք է օգտվել դոնոր ծրագրերից և կազմակերպել

---բուժաշխատողների մասնագիտական կարողությունների զարգացման միջոցով առաջնային առողջապահական ծառայությունների որակի բարելավում,

---խնդիրների վաղ հայտնաբերման ու կանխարգելման նպատակով կազմակերպել բժշտական զանգվածային հետազոտություններ

-բուժամբուլատորիայի արդիականացում՝ նորագույն բժշկական սարքավորումներով վերազինման և կահավորման միջոցով

Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը

Հատկապես վերջին 3-4 տարիների ընթացքում նկատվել է որոշակի դրական տեղաշարժ համայնքի ՏԻՄ-երի և բնակչության փոխհարաբերություններում, ՏԻՄ-երի գործունեությունը դարձել է թափանցիկ և հրապարակային, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Մյուս կողմից, համայնքի բնակիչները սկսել են բավականին ակտիվորեն մասնակցել ՏԻՄ-երի կողմից կազմակերպված հասարակական հանրագուտ աշխատանքներին, հանրային հանդիպումներին ու միջոցառումներին: Համայնքապետարանում տարեկան մի քանի անգամ կազմակերպվում են հանրային լսումներ և քննարկումներ (մասնավորապես, համայնքի բյուջեի նախագծի, համայնքային ծրագրերի և այլնի շուրջ), տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվում են ուսուցման և վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ, որոնց հաճույքով մասնակցում են ինչպես համայնքի ՏԻՄ-երը (համայնքի ղեկավարը և ավագանու անդամները) և աշխատակազմի մասնագետները, այնպես էլ համայնքի որոշ ակտիվ բնակիչներ:

Համայնքային կենտրոնի շենքի հաշմանդամների համար նախատեսված թեքահարթակի բացակայությունը մեծապես խոչընդոտում է նրանց մասնակցումը հանրային հավաքներին ու միջոցառումներին : Նախատեսվում է կառուցել թեքահարթակ. Այն կնպաստի հաշմանդամների մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը և որոշումների կայացմանը:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերը

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՇԵՂ ԿՈՂՄԵՐԸ

1. Համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում մարզկենտրոնին մոտ, հանրապետական նշանակության ավտոճանապարհին մոտ:
2. Համայնքը գտնվում է անտառամերձ գոտում, ունի մեծ չափի արոտավայրեր և վարելահողեր, որը հնարավորություն է տալիս զարգացնել գյուղատնտեսությունը, հատկապես անասնապահությունը:
3. Համայնքը 40- % -ով գազաֆիկացված է: Աշխատանքները դեռ շարունակվում են:
4. Համայնքը ամբողջությամբ հեռախոսաֆիկացված է:
5. Համայնքում կա կաթի վերամշակման գործարան, որը հնարավորություն է տալիս արտադրված կաթն իրացնելու: Իրացում կատարվում է նաև Վանաձորում:
6. Համայնքն ունի մեծ թվով բարձրագույն կրթություն ունեցող բնակիչներ և ուսանողներ:
7. Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման, գեղատեսիլ բնությունը
8. Համայնքում միջնակարգ դպրոցի և մանկապարտեզի գործելը
9. Համայնքում բջջային հեռախոսակապերի և հեռուստատեսային աշտարակների առկայությունը
10. Համայնքում տեղեկատվության մատչելիությունը՝ տեղական WiFi-ի առկայությունը
11. Համայնքը ապահովված է խմելու և կենցաղային ջրով

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

1. Երկրաշարժի պատճառով ավերվել են գյուղի բնակարանները և համայնքային ենթակայության շինությունները:
2. Արտագնա աշխատանքի մեկնողների թվի մեծացում:
3. Աշխատատեղերի պակաս:
4. Անմխիթար վիճակում են ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհները:
5. Համայնքը չունի անհրաժեշտ նյութատեխնիկական բազա գյուղատնտեսական աշխատանքներին օժանդակելու և բերքատվությունը բարձրացնելու համար:
6. Բնակչության մեծ մասը բնակվում են տնակներում:
7. Չկա կոյուղու ցանց
8. Խոտհարքների մեծամասնությունը չեն օգտագործվում՝ ճանապարհ չլինելու պատճառով:

9. Չի կատարվում կազմակերպված աղբահանություն:
10. Անխնա ոչնչացված անտառների պատճառով նկատվում է աղբյուրների ցամաքում և խմելու ջրի պակասում:
11. Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ քանակը

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Մեծ աշխատուժի առկայություն
2. Մշակութային համար պիտանի հողերի առկայություն
3. Անտառատնկման համար մեծ տարածքների առկայություն

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

1. Գյուղը հորդառատ անձրևներից, սողանքներից և սելավներից, չպաշտպանվելու հանգամանքը
2. Բնակչության մի մասը բացակայում է հանրապետությունից և չի կատարում իր հարկային պարտավորությունները
3. Ճանապարհների անմխիթար վիճակը
4. Կոյուղու բացակայությունը և աղբահանության թերի կատարումը
5. Սարալանջերի մեծ թեքությունների պատճառով արոտավայրերի և խոտհարքների էրոզիան:
6. Գյուղը մայրուղուն կապող ճանապարհի վիճակի հաճախակի վատացումը կապված է ճանապարհի որոշ տեղերի թեքության հետ:

3.Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հոգևոր պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և բարեկեցիկ բնակավայր: Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.

1. Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը
2. Գազաֆիկացումը հասցնել ավարտին
3. Վերականգնել կտրված շրջակա անտառները
4. Համայնքային ճանապարհները բարեկարգել
5. Կառուցել մանկապարտեզի երկրորդ խումբի համար սենյակներ
6. Լուծել կոյուղու խնդիրը
7. Համայնքն ապահովել շուրջօրյա խմելու ջրով
8. Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային, սպորտային կյանքը և հանգիստը ազատ ժամերին, հիմնել մշակութային կենտրոն:
9. Խոտհարքներում հնարավորության դեպքում կառուցել ճանապարհներ
10. Նորոգել ոռոգման ներքին ցանցը/ջրանցքներ/

11. Հնարավորության սահմաններում սեյսմիկ ռիսկի նվազեցում, միջոցառումների, ծրագրերի իրականացում, համայնքի սեյսմիկ քարտեզի ստեղծում
12. Անհրաժեշտության դեպքում համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների օտարում
13. Համայնքի պահուստային ֆոնդից համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարում

3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն, բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ բնակավայր:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնազլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- համայնքում կաթի, մսի հանձնման և վերամշակման արտադրամասի ստեղծում և գործարկում,
- համայնքում մեղվապահության ընդլայնում և էկոլոգիապես մաքուր մեղրի արտադրության աստիճանական զարգացում,
- տնային պայմաններում բնական հյութերի արտադրության կազմակերպում և աստիճանական զարգացում,
- համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ զբոսաշրջիկների գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի և կենցաղսպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով,
- համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգում և ասֆալտապատում , գիշերային լուսավորության համակարգի լիովին անցկացում, ճանապարհային նշանների տեղադրում,
- համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտա-

րական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական հանրակրթություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման միջոցով:

-տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բարելավում

-ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության աստիճանի հետևողական բարձրացում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

h/h	ցուցանիշ	Չափի միավոր	Փաստ. 2015թ	Փաստ. 2016թ	Կանխ. 2017թ	Կանխ. 2018թ	Կանխ. 2019թ	Կանխ. 2020թ	Կանխ. 2021թ
1	Աղքատ, շեմի ընտ. հարաբ. ընդ. թվին	%	9,4	10,2	10,3	10,3	10,4	10,0	10,0
2	Սեփ. Եկամտների տարեկ. աճը	%	-1,8	1,8	-1,3	-0,3	0,2	0,2	0,1
3	Գրանցված բնակիչների թվի փոփոխ.	%	-4,17	-7,89	-0,84	-0,25	-0,25	-0,25	-0,25

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

Յուրաքանչյուր խնդիրների լուծման նպատակով նախատեսված ծրագրերը, ծրագրերից ակնկալվող միջանկյալ արդյունքները մանրամասն նկարագրված է ՀՀԶԾ հավելված 1-ում ներկայացված ծրագրերի անձնագրերում:

4. ՀՀԶԾ ֆինանսավորում

ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերն իրականացնելու համար ֆինանսավորման աղբյուրներն են

- Համայնքի սեփական եկամուտներ,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներ
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ,
- Բարեգործություն/նվիրատվություն/
- Դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրվա միջոցներ,
- Այլ աղբյուրներ,

Ֆինանսավորման գումարները հնգամյա կտրվածքով ամփոփված է համաձայն ՀՀԶԾ հավելված 2-ում բերված աղյուսակի:

5, ՀՀԶԾ մոնիտորինգ

Իրականացվում է հարցումների և փաստերի ուսումնասիրության հիման վրա, որով գնահատվում է զարգացման ծրագրերի անձնագրերով նախատեսված ցուցանիշների իրական լինելը, ծրագրի իրականացման արդյունավետությունը ,բնակչության սոցիալական վիճակի փոփոխությունը : Հսկվում է ծրագրի իրականացման ընթացքը: Յուրաքանչյուր ծրագրի նակատմամբ իրականացված մոնիտորինգի ցուցանիշը նշված է մոնիթորինգի վերաբերյալ հավելվածում՝ ըստ տարիների և թիրախային արժեքների:Տեղեկատվության աղբյուրներն ամփոփված է համաձայն ՀՀԶԾ հավելված 3-ում բերված ՀՀԶԾ մոնիթորինգի անձնագրի: